ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1	**Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ*:**

1) հանապազ-որդ, բն-որան, նախ-ոե, ամեն-ոյա
2) –թյակ, տն-ոեն, օրըստ-ոե, օր-ո
3) աման-ոյա, քնքշ-որոր, բաց-թյա, թիկն-թոց
4) բար-ոություն, ջր-ոհնեք, հ-գուտ, հ-դս ցնդել

2	**Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *մ:***

1) բա-բիշ, հա-պատրաստից, Սա-վել, ճա-պրուկ
2) ա-բարիշտ, ա-փոփոխ, բա-բասանք, հա-բույր
3) ա-բաստանել, ճա-փա, սի-ֆոնիա, ա-բիոն
4) ա-բասիր, ա-պամած, բա-բակ, փա-փուշտ

3	**Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *յ*.**

1) Սոչի-ում, Ռաֆա-ել, արքա-որդի, սերմացու-ի
2) հեռանա-ի, վերարկու-ի, բարձրացնե-ի, տա-ի
3) գա-իսոն, Եսա-ի, դշխո-ական, Իսրա-ել
4) հա-ելի, միլ-արդ, ժան-ակ, նա-վածք

4	**Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա*.**

1) պարգև, պանդուխտ, սրտդողել, դշխուհի
2) արբշիռ, փաղչել, հորձանուտ, տարրալուծել,
3) արհամարհել, տարորոշել, ավելորդ, բողկ
4) քսուք, ժայտքել, ճմռթել, գաղտագողի

5	**Ո՞ր շարքի բոլոր բառերում է ընդգծված *ռ*-ն արտասանվում *օ*.**

1) կենս*ռ*լորտ, չորք*ռ*տանի, ան*ռ*ղնաշարավոր, ցածրա*ռ*ում
2) եռ*ռ*տանի, կարճա*ռ*տ, ցածր*ռ*ակ, ան*ռ*թի
3) չափ*ռ*որոշիչ, արջ*ռ*ոս, կրծ*ռ*սկր, ան*ռ*ղոք
4) քառ*ռ*որդ, վճռ*ռ*որոշ, ենթա*ռ*որովայնային, կող*ռ*սկր

6	**Ո՞ր շարքում միասին, անջատ, գծիկով գրության սխալ *կա:***

1) բերդ-քաղաք, քիթ-կոկորդ, հարավ-արևմուտք, Արփա-Սևան ջրատար
2) սիրտ-թոքային, կենաց-մահու, գեներալ-լեյտենանտ, հեռու-հեռավոր
3) գաղափարական-գեղարվեստական, ցուցահանդես-վաճառք, գիր-գրականություն, բառարան-տեղեկատու
4) բառ-մասնիկ, բառ-գիրք, գրող-հրապարակախոս, բողոք-դիմում

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) երկրորդ բաղադրիչներն են գրվում *փոքրատառով*.**

1) «ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆ» ՇՔԱՆՇԱՆ, ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ՅԱՐՈՍԼԱՎ ԻՄԱՍՏՈՒՆ
2) ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԴԻՆԱՍՏԻԱ, «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
3) ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ
4) ԹԱԴԵՎՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՀՈԲ ԵՐԱՆԵԼԻ, ԵՄԵՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՉԵՐԴ ԲԱՐԵԾՆՈՒԹՅՈՒՆ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն *կա*:**

1) քնքշասիրտ, արնախում, մշակութային, ընդեղեն
2) մատենիկ, ձկնաբույծ, գունավոր, ընկուզենի
3) սենեկապան, առաքելություն, սառցահատ, ալրաղաց
4) բնակվել, լեզվանի, ձնհալ, դաշունանման

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձևերի) վերջին վանկը չի շեշտվում:**

1) լերմոնտովյան, սեղանը, ջրվեժից, ուշքի գալ
2) բարեխնամ, տեխնիկայի, դարագլուխ, մաթեմատիկա
3) ծափ տալ, թխկի, համերաշխ, ստուգատես
4) գիսաստղ, գոնե, որը, ինչ-որ

10 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *կա*:**

1) Վարորդի համբերությունը արդեն հատնելու վրա էր, երբ դեպքի վայր ժամանեց ավտոտեսուչը:
2) Արարատի բարձունքից մեր առջև հառնեց Արագածը՝ սպիտակափառ գագաթով:
3) Գիտական հասկացությունները պետք է լինեն տարորոշված և ճշգրիտ:
4) «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության վերջին քառյակը մեծ տաղերգուի քանքարի փայլատակումն է:

11 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1) Հայաստա՛ն, անունդ տալիս ժայռի մեջ մի տուն եմ հիշում:
2) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ, երբ ամեն ինչ երազում է հոգու հետ:
3) Տխուր այդ երգը վաղուց եմ լսել, կարծես թե ես եմ այդ երգը հյուսել:
4) Արդեն արծաթն է ցոլում մեկ-մեկ Ձեր ճոխ մազերի պարզ հյուսվածքներում:

12 **Ո՞ր տարբերակում են համապատասխանում դարձվածքները և դրանց իմաստները:**

1. արյունը գլխին խփել	ա. համոզվել
2. լեզուն բռնվել	բ. հանձնվել
3. քարը փեշից թափել	գ. զայրանալ
4. զենքերը վայր դնել	դ. կարկամել

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ

13	**Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) լայնախոհ-նեղմիտ, շնորհազուրկ-ապիկար, կարկառուն- անվանի
2) ուշաթափվել-նվաղել, աղոթել-աստվածարել, հոծ-խիտ
3) տամուկ-խոնավ, թեժ-մարմանդ, դալուկ-գունատ
4) ստահոդ-շինծու, աչառու-կողմնակալ, անձայն-մունջ

14	**Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) պատվարժան-անարգ, գեղատեսիլ-անհրապույր, եղեմ-դժոխք
2) վճիտ-պղտոր, նենգ-ժպտադեմ, հնարամիտ-անճար
3) համերաշխ-գժտված, առինքնող-վանող, օրինաչափ-պատահական
4) պիղծ-սուրբ, գաճաճ-բարձրահասակ, ջրարբի-անջրդի

15	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են պարզ.**

1) հանդարտ, կաղամբ, հարուստ, կորուստ
2) արագիլ, անդունդ, արձան, գոմեշ
3) գեղարդ, բարակ, ամրակ, բողոք
4) զարմիկ, դադար, գալար, հովար

16	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) անվանացանկ, զորահավաք, հովասուն, քննախույզ
2) բնանկար, մարդախույս, ուխտատեղ, ակնահաճո
3) ուղղաթիռ, վիրակապ, ավարառու, էջանիշ
4) անասուն, սնափառ, պարսկահայ, մեկնարկ

17	**Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ *կա:***

1) բարեխառն, կորամեջք, հողմավար, հեծանիվ
2) խճաքար, որմնադիր, բարեգութ, հնավանդ
3) կարեվեր, բյուրեղապակի, ծանրաշարժ, լուսահոգի
4) հորդաբուխ, ալեհույզ, կաթնասուն, գետնանուշ

18	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ու* հոլովման:**

1) պատանի, որդի, պապ, գարի
2) անկողին, գինի, լուցկի, վազել
3) այգի, Թբիլիսի, օղի, կաղին
4) կիրակի, ամուսին, աղախին, բարդի

19	**Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) հավկիթներ, սպունգներ, մանրաթելեր, կայծքարեր
2) կիլոմետրեր, ջահակիրներ, ֆիդայիններ, տիկիններ
3) կողակիցներ, ոտնաչափեր, հացթուխներ, դուստրեր
4) ուղեցույցներ, երկրապահներ, կետաձկներ, հարթաչափներ

20	**Փոխանվանաբար (գոյականաբար) գործածված քանի՞ թվական կա հետևյալ հատվածում:**

Մի ոտ չունեմ,
Ուստի և ձեր երկուսի տեղ
Երեքն ունեմ:
Երկու ոտով,
Ինչ դուք չունեք և հեշտ կոչում եք «հենակներ»,
Ես մայթերն եմ կետադրում,
Որ մարդկային կյանքի վեպը դյուրին կարդա
Մայթագրեր ընթերցելու ընդունակը,-
Իսկ երրորդով,
Որի համար ինձ կոչում են միոտանի,
Նրանով էլ տնտեսում են տան ծախսերը՝
Ձեր զույգի տեղ միշտ կենտ կոշիկ պատվիրելով:

1) հինգ
2) երկու
3) երեք
4) չորս

21	**Ո՞ր տարբերակում գործողության հատկանիշ ցույց տվող դերանուն չկա:**

1) Չեմ դավաճանի իմ Նվարդին,
   Որքան էլ դյութես, օ՜ Շամիրամ:
2) Խնդացին, քրքջացին միայն, որ այդպես մնացել եմ մերկ.
   -Դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մեջ ամառ է,- ասին:
3) Իջնում ես հայոց լեռներեն,
   Ինչո՞ւ չես խոսում հայերեն:
4) Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
   Եվ այնքա՜ն ներում- ո՞ր երկրի սրտում…

22	**Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) մոտեցա, կանգնեց, կառչեցի, եկա
2) դիպավ, ասել էր, հավատաց, երգում էր
3) կորել էին, երգենք, խաղացինք, լսել
4) վերագրում էին, զբոսնում է, թերագնահատել, համակրել

23	**Ո՞ր տարբերակում վաղակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

1) Հեշտ է, գուցե, գրքեր գրե՜լ, ո՛չ թե կարդալ…
2) Եվ սպասեց այդպես նա գլխահակ,
   Ինչպես վայել էր հեզ հպատակին:
3) Սերում են նրանք և ա՛յն վայրենուց,
   Որ էլ չէ՜ր կարող ապրել քարայրում:
4) Ոչ ոք չի լսել սկիզբը նրրա
   Եվ չի լսելու վախճանը նրրա:

24 **Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ չկա:**

1) կպա, արբեցին, վազեցրի, հագեցա
2) խորացանք, թռա, եկանք, մոտեցրեցի
3) կորչեցի, գտա, հասցրի, դիպանք
4) հագա, բարձրացրիք, թռչեցինք, կորանք

25 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ չկա:**

1) Ինչքա՜ն գարուններ ձմեռներ դարձան, Աշխարհը կոկոն, ջահել է նորից:
2) Դու դեռ չես մեռել իմ հիվանդ սրտում, Դու դեռ ապրում ես երազի նման:
3) Հետո խոսեց իր ծրագրերի մասին, որոնք առնչվում էին այդ խնդրին:
4) Նա այնպես նայեց ինձ, որ հուզմունքից շփոթվեցի:

26 **Ո՞ր տարբերակում է *մոտ-ը* հանդես եկել որպես կապ:**

1) Եկար էլ, ի՞նչ իմանամ՝
   Ում մոտ ես մեղքդ լալու:
2) - Երանի՜ մոտդ վերադառնամ, մայրի՛կ ջան, -միշտ ասում էր նա:
3) Մնաք բարով՝ ասում եմ ես ընկերներիս՝ մոտ ու հեռու:
4) Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա:

27 **Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված հատկացուցիչ կա:**

1) Էն ո՞ւմ յարն է նըստած լալի
   Հոնգուր-հոնգուր էն սարում…
2) Եվ ո՞ւմ համար, էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի
   Սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով…
3) Զուր եմ փախչում, ինձ խաբում,
   Հազար կապ է ինձ կապում…
4) Հերթը հիմա քոնն է մի պահ.
   Դո՛ւ էլ նայիր սեգ ճակատին
   Ու անցիր…

28 **Տրված հատվածներում ո՞ր խոսքի մասով արտահայտված ենթակա չկա:**

1. Աչք մտնողը աչքի ընկավ՝ աչք կհանի…
2. Գեղեցիկը կփրկի աշխարհը:
3. Տխուր լուրը նրան հայտնեցին շատ զգույշ կերպով:
4. Խոսք բացեց ներս մտնողներից առաջինը:

1) գոյականով
2) դերբայով
3) ածականով
4) թվականով

29 **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

1) Աղջիկը ստիպված էր համաձայնել սիրած տղայի կարծիքին:
2) Ազգի զարգացումը խթանելու համար մեծ ու անձնազոհ առաջնորդներ են պետք:
3) Մեր առաջընթացին միշտ էլ խոչընդոտել են անձնապաշտ ու դավաճան մարդիկ:
4) Մարդ կոչվելու իրավունք ունի նա, ով միշտ երախտապարտ է իր ծնողներին, իր ուսուցիչներին:

30 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Ողջ գյուղն անհամբերությամբ սպասում էր նրանց, ովքեր հաղթանակով էին վերադառնում պատերազմից:
2) Թող իմ մասին քո ունեցած որոշ հիշողություններ չխամրեցնեն ուրախությունդ:
3) Ինձ է հասնում այն ծովայինների երգը, որոնք պատրաստվում են ափ հանել իրենց նավակները:
4) Մեր նկարների մի մասը մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո ուղարկվեցին Պրահա:

31 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

……, որը գտնվում էր Աթենքի մոտակայքում՝ դիցաբանական հերոս Ակադեմոսի անունը կրող պարտեզում:

1) Ակադեմոսի փիլիսոփայական դպրոցը Հին Հունաստանում հիմնել էր Պլատոնը
2) Հին Հունաստանում Պլատոնի հիմնած փիլիսոփայական դպրոցը կրում էր Ակադեմիա անունը
3) Ակադեմիա անունն էր կրում Պլատոնի հիմնած փիլիսոփայական դպրոցը Հին Հունաստանում
4) Հին Հունաստանում Ակադեմիա անունն էր կրում Պլատոնի հիմնած փիլիսոփայական դպրոցը

32 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

1) *Ինչ որ կատարվեց տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում, անհնար էր նկարագրել:*
   Տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում կատարվածը անհնար էր նկարագրել:
2) *Մենք ապրում ենք Գորիսի մեր խրճիթում, որ հայրս էր մի երկու տարի առաջ կառուցել:*
   Մենք ապրում ենք մի երկու տարի առաջ հորս կառուցած Գորիսի մեր խրճիթում:
3) *Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքը, որը ասք է մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին:*
   Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքը՝ մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին ասքը:
4) *Մեր քաղաքի մարդիկ, որոնք տակավին չեն մոռացել հողագործությունը, մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատղաշ ծառերին:*
   Մեր քաղաքի՝ հողագործությունը տակավին չմոռացած մարդիկ մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատղաշ ծառերին:

33 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան չպետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նրա հայրը բարձրահասակ թիկնեղ մի տղամարդ էր խիստ դիմագծերով:
2) Մի քանի խոսք փոխանակելուց հետո արագ պառկեց անկյունում դրված բազմոցին և շուռ գալով աչքերը փակեց:
3) Հեռավոր ճամփորդությունից ուր որ է վերադառնալու են նրա երկար տարիներ բացակայած եղբայրները:
4) Նա ցանկանում էր տեսնել ինչ կա այդ մարդկանց հագին:

34 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Այստեղ թիակն առավ Ուրաշիման, մյուս թիակն առավ ծովի թագավորի աղջիկը, ու երկար թիավարեցին, մինչև հասան վիշապների ապարանքը, ուր բնակվում էր ծովի աստվածը:
2) Տղան դարձյալ կանգնեց, հետո մի քիչ վարանելով, նայեց լանջն ի վեր բարձրացող արահետին:
3) Ծիրանի ծառի ստվերն ու արևի դեղին բծերը թրթռում են իմ տետրակի վրա, օրորվում՝ ինչպես ջրածտի ճոճքը:
4) Մի անգամ փառատենչ իշխանը, հանկարծակի խուժելով մի հեռավոր իշխանության սահմաններից ներս, ամրոցից ամրոց գրավելով՝ հասնում է երկրի մայրաքաղաքի փակ դռներին:

35 **Ո՞ր նախադասության մեջ *և*-ից առաջ ստորակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Հանկարծ փայլատակեց ինչ-որ լույս և շրջակայքը լուսավորեց:
2) Պարսպապատերին հապշտապ երևացին զինվորներ զենքերը պատրաստ պահած և հարձակման նշան արեցին:
3) Հայտնվեց կարճ ու գնդլիկ մի զորական կորովի շարժումներով և գնաց եկվորներին ընդառաջ:
4) Բոլորը հոգնատանջ էին և ամեն ինչից երևում էր արագաերթ էին կտրել երկար ու ձիգ ճանապարհը:

36 **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Ամպերով գոռաց երկինքը զարհուր,
Ցավից անձրևը կարկուտի փոխվեց,
Անեծք կայծակեց ու լացեց անհույս,
Ու մնաց լուսինն աչքում երկնքի
Որպես մի շիթը սառած արցունքի:

1) հակադրություն
2) փոխաբերություն
3) համեմատություն
4) անձնավորում

37 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նա սկզբում թվարկում է արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սողունները:
2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտակները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

1) 4, 2, 1, 3
2) 4, 2, 3, 1
3) 4, 3, 1, 2
4) 3, 2, 1, 4

38 **Որ հատվածը հայերենի ո՞ր տարբերակով է:**

1. Մեղք իմ բազում են յոյժ,
   Ծանր են, քան զաւազ ծովու.
   Քանզի քեզ միայնոյ մեղայ
   Ողորմեա ինձ, Աստուած:
2. Կ՛ուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,
   Ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհագ.
   Կ՛ուզեմ որ մեռնին տիվ ու ժամանակ՝
   Ու դաբիրներուդ իյնամ ծնրադիր:
3. Ամենայն տեղ մահը մի է,
   Մարդ մի անգամ պիտ մեռնե.
   Բայց երանի՜, որ յուր ազգի
   Ազատության կըզոհվի:
4. Երեսդ է լուսնի նըման բոլորեալ տեսդ՝ արեգական. Ոնց որ դու ելնես քալես, արեգակերպ կու փայլես:

ա. արևմտահայերեն

բ. արևելահայերեն

գ. միջին հայերեն

դ. գրաբար

1) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
2) 1-ա, 2-գ, 3- բ, 4-դ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

39 **Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ «Դանիելյան նշանագրերի մասին» և «Մեսրոպյան նշանագրերի մասին, որ տրվեցին երկնային շնորհով» հատվածներին վերաբերող պնդումներից քանիսո՞ւմ սխալ կա:**

ա. Եպիսկոպոսները Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին հորդորում էին հոգ տանել հայոց գրերի գյուտի մասին:
բ. Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, ուսումնասիրելով դանիելյան նշանագրերը, որոնք դասավորված էին ասորերենի օրինակով, համոզվեցին, որ դրանք «վանկ առ վանկ» ճիշտ չեն արտահայտում հայերեն բառերի հնչյունները:
գ. Մեսրոպ Մաշտոցը հայերեն նշանագրերը ստեղծելիս ապավինում է աղոթքին, և «ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ» նրան է պատկերանում մի աջ ձեռք՝ քարի վրա գրեր գծող:
դ. Մեսրոպ Մաշտոցը հույն գրչագրող Հռոփանոսի հետ վերջնական տեսքի է բերում տառերի գծագրերը՝ համապատասխանեցնելով լատիներենի հնչյուններին:

1) բոլորում
2) մեկում
3) երկուսում
4) երեքում

40 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.**

Ես էստեղ նստեմ, կերուխում անեմ,
Մըսրա Մելիք Դավթին գերի՞ պահի:
Բա ամոթ չէ՞ մեզի…
Հացն ու գինին, տեր կենդանին,
Չուր էդա որբ հետ չը բերեմ,
Էս բաժակ իմ բերան չառնեմ:

1) Վերգոյի
2) Արմաղանի
3) Քեռի Թորոսի
4) Խանդութի

41 **Որ հեղինակը ո՞ր դարաշրջանում է ապրել ու ստեղծագործել:**

ա. Նահապետ Քուչակ	1. 18-րդ դար
բ. Նաիրի Զարյան	2. 20-րդ դար
գ. Միքայել Նալբանդյան	3. 19-րդ դար
դ. Եղիշե Չարենց	4. 16-րդ դար

1) ա-4, բ-2, գ-3, դ-2
2) ա-4, բ-2, գ-3, դ-1
3) ա-4, բ-2, գ-1, դ-3
4) ա-2, բ-4, գ-1, դ-3

42 **Խոսքերից ո՞ր որ հեղինակինն է:**

ա. Եղիշե

բ. Մուրացան

գ. Գր. Զոհրապ

դ. Մ. Մեծարենց

ե. Ռաֆֆի

1. «Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը, նրա տխուր ներկան. լա՞վ եմ գրել, թ՞ե վատ, նրա համար եմ գրել, նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացմունքները հաղորդել»:
2. «Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»:
3. «Բանաստեղծը Բնության ցոլացումը պետք է ըլլա, թե ոչ բանաստեղծ չէ՛ իրապես, քերթվածները իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լերան մշտանույն զորությունը»:
4. «…Որո՞ւ թողում սա անտեր ու անգլուխ ժողովուրդը: Չէ՛, փախչիլ չեմ կրնար, պետք է, պարտքս է մինչև վերջը պատնեշին վրա կենալ»:

1) ա-2, բ-1, գ-4, դ-3
2) ա-2, բ-1, գ-3, դ-4
3) ա-1, բ-2, գ-3, դ-4
4) ա-2, ե-1, գ-4, դ-3

43 **Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են *ժողովրդի մարդիկ* Ռաֆֆու «Սամվել» պատմավեպում:**

1) Մալխաս, Արբակ, Մանի (Մանեճ)
2) Արտավազդ, Հուսիկ, Դրաստամատ
3) Նվարդ, Արտավազդ, Համազասպ
4) Զավեն, Վահանդուխտ, Մանվել

44 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի և «Պատվի համար» դրամայի հերոսներն ու նրանց խոսքերը:**

ա. Միքայել — 1. «....19-րդ դարը, սիրելի՛ս, խաբեության դար է, իսկ այդ դարը դեռ չի վերջացել: Այժմ խաբում են բոլորը և ամենից ավելի նրանք, որոնք ըմբոստանում են խաբեության դեմ»:

բ. Մարութխանյան — 2. «Տեսնո՞ւմ եք այդ մթին բուրգերն իրենց սուր ու եռանկյունի գագաթներով... Դա մի տարօրինակ քառս է, ես համեմատում էի այդ քառսը մեր կյանքի, մեր միջավայրի, ... իմ միջավայրի հետ և նույնը տեսնում էի այնտեղ....»:

գ. Անդրեաս — 3. «Պարոն թանաք լպստող, …խնդրեմ անկոչ վերահսկողի դեր չկատարեք: Քեռի՛, եթե այս րոպեին երեք հարյուր ռուբլի չունենամ, կխայտառակվեմ: Պատվի խնդիր կա մեջտեղ: Եթե ինձ սիրում ես, մի՛ ուշացնիր»:

դ. Սուրեն — 4. «....Սաղաթել, գլխովս հազար ու մի փորձանք է անցել: Երդում եմ կոտրել,.... խեղճեր եմ գռփել ու կողոպտել, երեք անգամ կաշառքով ազատվել եմ դատարանից, բայց երբեք այս դրության մեջ չեմ եղել»:

1) ա-2, բ-1, գ-4, դ-3
2) ա-1, բ-4, գ-3, դ-2
3) ա-2, բ-4, գ-1, դ-3
4) ա-1, բ-3, գ-2, դ-4

45 **Ինչո՞ւ է Նար-Դոսի պատմվածքը կոչվում «Նեղ օրերից մեկը»:**

1) Պատրիկյանի դժվարին օրը ժամանակավոր է, քանի որ նա ունի նվիրված և առատաձեռն ընկերներ:
2) Ներկայացվում է մտավորականի կյանքում անհաջողություններով լի բացառիկ մի օր:
3) Պատրիկյանի ներկա ծանր վիճակը հակադրվում է անցյալի բարեկեցիկ օրերին:
4) Հայ մտավորականի կյանքի մեկ օրը նյութական զրկանքների անվերջանալի շղթայի միայն մեկ օղակն է:

46 **Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:**

ա. Փափագ սրտով խընդիրք արել
բ. Ջուրն ու ծաղիկ աստղունք դրրել
գ. Կույս սափորով, լուռ ու մունջ
դ. Բարի ժըպտան իր սերին
ե. Օխտն աղբյուրից ջուր է առել
զ. Կապել սիրո ծաղկեփունջ
է. Խընդիրք արել աստղերին
ը. Օխտը ծաղկից ծաղիկ քաղել

1) ե, գ, ը, զ, բ, է, ա, դ
2) ե, գ, ա, դ, ը, բ, է, զ
3) բ, է, ե, դ, ը, ա, գ, զ
4) ը, զ, բ, դ, ա, ե, է, գ

47 **Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում նշվածներից ո՞րը արտացոլված չէ.**

1) արևելյան բնապատկերներ՝ ներդաշնակված քնարական հերոսի ապրումներին
2) աշխարհը և մարդկանց վերափոխելու համար մարդկությանն ուղղված պայքարի կոչը Աբու-Լալայի կողմից
3) հայրենիքի, կնոջ, ընկերների, բարեկամների հանդեպ քնարական հերոսի ատելության դրդապատճառները
4) իշխանության և օրենքների, աղճատված մարդկային հարաբերությունների դատապարտումը

48 **Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններից ոչ մեկը Միսաք Մեծարենցինը չէ:**

1) «Իջնում է գիշերն անգութ ու մթին», «Պապը», «Ասպետի սերը», «Տաղ անձնական»
2) «Դարդս լացեք», «Ձմրան պարզ գիշեր», «Հայոց վիշտը», «Ցորյանի ծովեր»
3) «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Մեղուները», «Մեռած աստվածներուն», «Ձոն»
4) «Ջարդը», «Աքասիաներու շուքին տակ», «Նեմեսիս», «Հոգեհանգիստ»

49 **Նշվածներից ո՞րը դրամատիկական ինչ ժանրի ստեղծագործություն է:**

ա.«Արա Գեղեցիկ», Ն. Զարյան	1. դիցապատմական ողբերգություն
բ. «Պատվի համար», Ալ. Շիրվանզադե	2. կատակերգություն
գ. «Հին աստվածներ», Լ. Շանթ	3. դրամա
դ. «Պաղտասար աղբար», Հ. Պարոնյան	

1) ա-2, բ-3, գ-1, դ-2
2) ա-1, բ-3, գ-3, դ-2
3) ա-1, բ-3, գ-2, դ-2
4) ա-3, բ-2, գ-3, դ-1

50 **Ո՞ր տարբերակի թվերի դասավորությունն է ճիշտ նշում Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի գլուխների ճիշտ հաջորդականությունը:**

1. «Եղեռնի համազանգ»
2. «Ծավալվող համազանգ»
3. «Արևագալի համազանգ»
4. «Ցայգալույսի համազանգ»
5. «Միջօրեի համազանգ»
6. «Ահագնացող արձագանք»

1) 2, 3, 5, 6, 4, 1
2) 1, 3, 6, 2, 4, 5
3) 4, 6, 3, 2, 1, 5
4) 4, 3, 5, 2, 1, 6

51 **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը սխալ նշված.**

1) ՍՈԿԿ-2666
2) ՓՊԸ-8808
3) ՐԽԴ-5044
4) ՃԺ-110

52 **Ո՞ր շարքում է տրված բառի հնչյունափոխված արմատի տարբերակը սխալ վերականգնված.**

1) ընչացք → ինչք
2) վիմարձան → վեմ
3) գիտակ → գետ
4) դիտարժան → դետ

53 **Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված.**

Ասում են՝ հարյուրավոր տարիներ առաջ մի աշխարհ կար՝ տա-ագույն(1) ծաղիկներով, թ-թռուն(2) ու ոսկեթև թիթեռներով, թ-վռան(3), կարկաչ-ն(4) գետերով, զվար- (5), սառնորակ աղբյուրներով, որոտ-նդոստ(6) ջրվեժների շառաչ-նով(7): Լուրթ երկնքում թևածում էին սիգապան- (8) արծիվները, վարդի թ-ուտներում(9) թռչուններն էին ճռվողում, մեղուները բ-ալով(10) թռչում էին ծաղկից ծաղիկ:

1) 1 - ր, 2 - ռ, 3 - ր, 4 - ու, 5 - թ, 6 - -, 7 - յու, 8 - ծ, 9 - պ, 10 - զզ
2) 1 - րր, 2 - ր, 3 - ռ, 4 - ու, 5 - դ, 6 - ը, 7 - յու, 8 - ծ, 9 - փ, 10 - զզ
3) 1 - ր, 2 - ր, 3 - ռ, 4 - յու, 5 - թ, 6 - ը, 7 - ու, 8 - ձ, 9 - փ, 10 - զ
4) 1 - ր, 2 - ր, 3 - ռ, 4 - ու, 5 - թ, 6 - ը, 7 - յու, 8 - ծ, 9 - փ, 10 - զզ

54 **Քանի՞ փակ և քանի՞ բաց վանկ կա *գրաքննադատ* բառում.**

1) չորս բաց, մեկ փակ
2) երեք բաց, երկու փակ
3) երկու բաց, երկու փակ
4) երկու բաց, երեք փակ

55 **Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝**

լիդեր, լոգունգ, լոմբարդ, սայթ:

1) վկա, խրատ, դրամապանակ, վկայական
2) ղեկավար, կոչ, պահոց, արժանիք
3) հետևորդ, խոսնակ, դրամանիշ, տպիչ
4) առաջնորդ, կարգախոս, գրավատուն, կայքէջ

56 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) **շահ** ստանալ - պարսից **շահ**
2) **ակնարկ** նետել - **ակնարկ** տպագրել
3) գետի **ափ** - ձեռքի **ափ**
4) **գորշ** օրեր - **գորշ** վերարկու

57 **Տրված բառիմաստները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. մատուռ 1. աստիճանների հենաձող
բ. բուրվառ 2. հեթանոսական տաճար
գ. բազրիք 3. խնկարկելու անոթ
դ. նշխար 4. փոքրիկ եկեղեցի
ե. մեհյան

1) ա - 4, բ - 3, գ - 1, դ - 2
2) ա - 2, բ - 1, դ - 3, ե - 4
3) ա - 4, բ - 3, գ - 1, ե - 2
4) ա - 2, բ - 3, դ - 1, ե - 4

58 **Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ և բառ կազմել *նախ* - նախածանցը (առանց երկրորդ ածանցի).**

փառատոն, այսօր, գահընկեց, քննիչ, հաշվենկատ, հիմնական, առատաձեռն, նշանակետ, քայլերգ, որոշակի:

1) յոթի
2) երեքի
3) հինգի
4) վեցի

59 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն *կա:***

1) **թռչունի թևով** - շատ արագ, **իրար սրտից ջուր խմել** - իրար լավ հասկանալ, **գլխին ձյուն գալ** - դժբախտանալ
2) **գլխով քամի անցնել** - դատարկ բաներ մտածել, **ծնոտը թուլացնել** - շատախոսել, դեմ առնել – հանդիպել
3) **պատի ծեփ դառնալ** - սրտնեղել, **արևի երես հանել** - բացահայտել, **բամբակ կշռել** - նստած տեղը նիրհել
4) **բաժակը լցվել** - համբերությունից դուրս գալ, **կրակ կտրել** - զայրանալ, **թևերը թուլանալ** - հուսահատվել

60 **Ո՞ր շարքում կա անեզական գոյական:**

1) գինիներ, շոգեր, անձրևներ, քամիներ
2) Արշակունիներ, Երվանդունիներ, Մամիկոնյաններ, Կամսարականներ
3) վիպասքեր, աղանդերներ, ակրատներ, աղանդներ
4) մայրցամաքներ, Մասիսներ, Ֆիլիպիններ, երկրամասեր

61 **Նախադասություններից քանիսո՞ւմ որոշիչ հոդի գործածության սխալ կա:**

1. Իմաստունն զգուշությամբ փակեց աչքերը և հրաժեշտ տվեց կյանքին:
2. Ահագնադողոդ ծափերը անմիջապես խախտեցին դահլիճի քար լռությունը:
3. Այդ պահին պարեկն եկավ իշխանի մոտ և հաղորդեց թշնամու գալստյան մասին:
4. Զորականի աչքերն հաղթության բերկրանքից փայլում էին:

1) չորսում
2) մեկում
3) երկուսում
4) երեքում

62 **Ո՞ր նախադասության մեջ դերբայական ձևի սխալ գործածություն չկա:**

1) Այդ մարդը ուտելուց միշտ խոսում էր և ծիծաղում:
2) Եթե ես ցանկանայի փախնել, ոչ ոք ինձ չէր խանգարի:
3) Այդ միջադեպը քարոզարշավի վրա ոչ մի ազդեցություն էլ չի կարող թողել:
4) Շատ կարդալուց վնաս չկա:

63 **Ընդգծվածներից ո՞րը ներգործական սեռի բայ չէ:**

1) Օտարերկրացիները միայն մեր Մատենադարանում կարող են **տեսնել** իրենց հեղինակների կորած բնագրերի հնագույն թարգմանությունները:
2) Խաչքարերը **կանգնեցնում էին** սրբավայրերում, գերեզմանատներում, մեծ ու փոքր ճանապարհների եզրերին:
3) Ռուս իմաստասեր Կոզմա Պրուտկովն ասել է. «Պտուղը **վայելելիս** հիշի՛ր ծառի արմատները»:
4) 393 թվականին Մեսրոպ Մաշտոցի ձեռքով **աշխարհ է եկել** հայերեն ձեռագիր առաջին մատյանը:

64 **Ընդգծված անկանոն բայերից որի՞ մեջ է դրսևորվել անկանոնություն:**

1) Քամին սարերից առաջին ձյունի
Փոշին է բերում և շաղ **է տալիս**
Բոբիկ ոտներիս ու փշաքաղված մազերիս վրա:
2) Եվ ո՞վ **կասի**՝ ինչո՞ւ ես դու,
և ո՞վ կասի, թե ո՞ւր հասար…
3) Ուրիշ բլբուլ **կգա** կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը:
4) Հայաստա՛ն, անունդ **տալիս**
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում:

65 **Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Բրոնզաձույլ արձանի՝ բոլոր մարդկանց հետաքրքրող լուրը անմիջապես տարածվեց հելլենիստական աշխարհով մեկ՝ դեպի Հռոդոս ձգելով բյուրավոր ճամփորդների:

1) բյուրավոր- ածական
2) բոլոր – որոշյալ դերանուն
3) տարածվեց –բայ, անցյալ կատարյալ
4) մեկ – քանակական թվական

66 **Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ չկա:**

1) Մայիսի 30-ին կայանալիք Երևանի քաղաքապետի ընտրությունները հանրության ուշադրության կենտրոնում են:
2) Հանրաճանաչ անգլիական «Ավե» ընկերությունը վաղուց արդեն հայկական շուկայում է:
3) Իսլամական համաշխարհային համաժողովը այդպես էլ չկայացավ:
4) Շատ եվրոպական երկրներում այսօր հորդառատ անձրևներ են տեղում:

67 **Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

1) Խարխուլ նրբանցքով ուր որ է ներս կմտնեին որբ մանչուկին փնտրող ոստիկանները ահաբեկելով բակում ապրող բոլոր մարդկանց:
2) Երկօրյա դադարից հետո նորից աղմուկ և մարդիկ խուճապահար փախչում են:
3) Ես այդ դեպքերից սարսափած նայում եմ չգիտես որտեղից եկած փախստականներին:
4) Մեկը մեկից ամաչելով և զուսպ և հավաք նստում էին մերոնք կարգով կրտսեր ու ավագ:

68 **Տրված նախադասություններից որո՞ւմ որոշիչն արտահայտված չէ դերբայական դարձվածով:**

1) Խնձորենիները՝ խնձորներով ծանրացած, թեքվել էին տանիքի վրա:
2) Այո՛, հրաշք է աշխարհը, հեքիաթ է գեղեցիկ:
3) Ուսերն ի վար թափվող վարսերը ծածանվում էին քամուց:
4) Հիշում էր գյուղում անցկացրած օրերը՝ թիկնած ճոճաթոռին:

69 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները:**

1. Խնդացին, քրքջացին միայն, որ այդպես մնացել եմ մերկ:
2. Ապրե՛լ, ապրե՛լ, այնպես ապրել,
   Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:
3. Ես նախանձում եմ նրանց բոլորին,
   Ովքեր ապրում են հավատով խորին:
4. Բարի նախանձով նրան եմ հիշում,
   Ով չի մոլորվում անթափանց մուժում:
5. Պարզվում է, որ չեմ նախանձում կյանքում ոչ ոքի…

ա. ձևի պարագա
բ. հանգման խնդիր
գ. պատճառի պարագա
դ. ուղիղ խնդիր
ե. ենթակա

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ, 5-ե
2) 1-ա, 2-ա, 3-բ, 4-դ,5-ե
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-ե
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ

70 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Նվագախմբի ձայնը երկրաշարժի տպավորություն թողեց գորիսեցիներից հատկապես Շենում ապրողների վրա:*
   Նվագախմբի ձայնը երկրաշարժի տպավորություն թողեց գորիսեցիներից հատկապես նրանց վրա, ովքեր Շենում էին ապրում:
2) *Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև նրանից առաջ ու հետո ապրած քիչ հայտնի աշուղներով:*
   Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև քիչ հայտնի աշուղներով, որ ապրել էին նրանից առաջ ու հետո:
3) *Սարերից իջնում էին հազարավոր քոչվորներ՝ իրենց խաշնարածության բարիքներով հեղեղելու Գորիսի մեծ տոնավաճառը:*
   Սարերից իջնում էին հազարավոր քոչվորներ, որպեսզի իրենց խաշնարածության բարիքներով հեղեղեն Գորիսի մեծ տոնավաճառը:
4) *Նրա զրույցներից մեկի նյութը մեր հարուստներից շատերի անճաշակ հագնվելն էր:*
   Նրա զրույցներից մեկի նյութն էր այն, որ մեր հարուստներից շատերը անճաշակ են հագնվում:

71 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

- Ես առողջությունս չեմ կորցրել, ոչ էլ կարողությունս, - պատասխանում է ձեզ վաճառականը և ավելացնում է, - այսօր համբերե՛ք, վաղը կպատմեմ, և ամեն ինչ կիմանաք:

1) Վաճառականը պատասխանում է ձեզ ու ավելացնում, որ ինքը իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
2) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ ինքը իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
3) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ նա իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանանք:
4) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ ինքն իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերենք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:

72 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուք պիտի լինի:**

Սովորելով համալսարանում (1) նա զարմանալիորեն գրեթե ընկերներ չուներ(2) խորշում էր
բոլորից ու ոչ ոքի մոտ չէր գնում (3) ուրիշներին էլ հյուր չընդունելով: Պարապում էր զօրուգիշեր (4) բոլորովին չխնայելով իրեն ու դրա համար (5) հարգում էին նրան բայց որևէ մեկը չէր սիրում:
Նրա հետ անհնար էր (6) որևէ այլ հարաբերություն ունենալ որովհետև մի կենսուրախ բարեկիրթ զրուցասեր տղա էր (7) պարզամտության հասնող բարեհոգությամբ: Այդ պարզամտության տակ սակայն (8) թաքնված էին թե մտքի խորություն թե արժանապատվություն և ընկերները (9) ըմբռնելով այդ (10) սիրում էին նրան:

1) 1, 3, 4, 7, 10
2) 2, 4, 5, 8, 10
3) 1, 2, 6, 8, 9,10
4) 1, 3, 4, 7

73 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

1. Տասնվեց-տասնյոթ տարեկան մի պատանի, դուրս գալով դպրոցից և ստեպ-ստեպ շոշափելով գրպանի թանկարժեք պարունակությունը՝ հասունության վկայականը՝ դեգերում է Գյումրի քաղաքի հրապարակում:
2. Տարտամ քայլերով անցնում էր նա հյուրանոցի առջևով և հանկարծ շրջվելով՝ տեսավ շքամուտքից դուրս եկող մի մարդու՝ վիթխարի գամփռի շղթան ձեռքին:
3. Մինչև թարգմանվեին Վահանից առգրավված գրքերը, մինչև ծանոթանային դրանց բովանդակությանը՝ ահագին ժամանակ կանցներ:
4. - Մենք ձեզ չենք վռնդում. եթե ցանկություն ունեք՝ կարող եք գիշերել ցախատանը,- ասել էր տանտերը՝ գլխով ցույց տալով բակի ցածրիկ շինությունը:

1) չորսում
2) մեկում
3) երկուսում
4) երեքում

74 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Ընչաքաղցությունից իրեն՝ տասնիննամյա չնաշխարհիկ օրիորդին, ամուսնացրին տարեց մարդու հետ:

1. ընչաքաղցությունից (ա. պատճառի պարագա, բ. անջատման խնդիր)
2. օրիորդին (ա. ուղիղ խնդիր, բ. բուն բացահայտիչ)
3. ամուսնացրին (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ)
4. տասնիննամյա (ա. որոշիչ, բ. չափի պարագա)

1) 1- բ, 2-բ , 3- ա, 4-ա
2) 1- ա, 2- բ, 3-ա , 4- ա
3) 1- բ, 2- ա, 3- բ, 4- ա
4) 1- ա, 2- ա, 3- բ, 4-բ

75 **Նշված հատկանիշներից ո՞րը բնորոշ չէ վարչական ոճին.**

1) խոսողի անձնական վերաբերմունքի արտահայտում
2) բառերի ուղղակի իմաստների օգտագործում
3) փոխաբերության բացառում
4) դերբայական դարձվածների հաճախակի գործածություն

76 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Լազարյան ճեմարանն իր գոյության ընթացքում պահպանել է իր հայկական դիմագիծը. հայերենով դասավանդվել են մի շարք հայագիտական առարկաներ, ուսուցիչներից և դասախոսներից շատերը եղել են հայեր: Տարբեր ժամանակներում ճեմարանում դասավանդել են Հ. Ալամդարյանը, Մ. Նալբանդյանը, Ս. Շահազիզը, այստեղ են սովորել ապագա նշանավոր գրողներ Ռ. Պատկանյանը, Գ. Դոդոխյանը, Վ. Տերյանը, արվեստի և գիտության նշանավոր այլ գործիչներ:
2. Ճեմարանում ուսուցումը հիմնականում տարվել է ռուսերենով, սակայն հանրակրթական առարկաներին զուգահեռ դասավանդվել են հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, նաև մի շարք արևելյան լեզուներ՝ պարսկերեն, արաբերեն, թուրքերեն: Խորհրդային տարիներին այս ճեմարանի հիմքի վրա ստեղծվում է Մոսկվայի արևելագիտության ինստիտուտը:
3. 1921 թվականից Լազարյան ճեմարանի շենքը ծառայել է իբրև Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն: Ներկայումս այն Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատունն է:
4. Լազարյան ճեմարանը հիմնադրվել է Մոսկվայում 1815 թվականին մեծահարուստ Լազարյանների նախաձեռնությամբ և միջոցներով: Այստեղ ընդունվում էին տարբեր ազգերի 10-14 տարեկան երեխաներ, հիմնականում՝ հայեր և ռուսներ:

1) 3, 2, 1, 4
2) 4, 2, 3, 1
3) 4, 2, 1, 3
4) 3, 1, 4, 2

77 **Ո՞ր միտքը չի հակասում տեքստի բովանդակությանը:**

Բոլորը գիտեն, որ խլացած Բեթհովենը երաժշտություն էր գրում, իսկ ռուս դերասան Օստուժևը լսողությունը կորցնելուց հետո էլ մնաց բեմի վրա՝ ապշեցնելով իր երկրպագուներին: Սակայն քչերն են ճանաչում 1948 թվականին մահացած Լինա Պոյին, որը, ամբողջովին կորցնելով տեսողությունը, շարունակում էր հիանալի քանդակել և ավելի քան հարյուր քանդակ էր ստեղծել այդ վիճակում: Նրան հաջողվում էր միանգամայն անխաթար, առանց որևէ մանրամասն բաց թողնելու մարմնավորել իր մտահղացումները նյութականորեն:

1) Տեսողության կորուստը Օստուժևին բնավ չխանգարեց, որ շարունակի բեմական գործունեությունը:
2) Տեսողական և լսողական ունակությունների կորուստը անդառնալի է:
3) Որքան էլ ապշեցուցիչ է, բայց ոմանք կուրանալուց հետո անգամ կարողանում են զբաղվել քանդակագործությամբ:
4) Երբեմն լսողությունը կորցնելուց հետո էլ շատերը կարողանում են երգել և երաժշտություն գրել, ինչպես Բեթհովենը:

78 **Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններն են պոեմներ:**

1) «Մատյան ողբերգության», «Անուշ», «Հավերժական սերը», «Թմկաբերդի առումը»
2) «Հարդագողի ճամփորդները», «Անլռելի զանգակատուն», «Գանգրահեր տղան», «Ամբոխները խելագարված»
3) «Աբու-Լալա Մահարի», «Վարք մեծաց», «Պատմության քառուղիներով», «Հարճը»
4) «Դեպի լյառը Մասիս», «Հառաչանք», «Բիբլիական», «Դանթեական առասպել»

79 **Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

1) Առակը փոքրածավալ ստեղծագործություն է, որին հատուկ են այլաբանությունն ու բարոյախրատական եզրակացությունը: Առակը նախապես ծագել է ժողովրդական բանահյուսության մեջ, ապա մուտք գործել գրավոր գրականություն:
2) Նորավեպը փոքրածավալ արձակ ստեղծագործություն է, որտեղ գործողությունները զարգանում են արագ ու սրընթաց: Այն ունենում է կտրուկ ու անսպասելի ավարտ:
3) Պոեմները լինում են պատմողական (էպիկական), քնարական (լիրիկական) և քնա-բապատմողական (լիրոէպիկական):
4) Հայ գրականության մեջ քնարական պոեմի դասական օրինակներ են Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության», Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Դ. Վարուժանի «Հարճը» պոեմները:

80 **Նշված հատկանիշները բանաստեղծական ո՞ր տեսակին են բնորոշ:**

Ութտողանի բանաստեղծություն է, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է նաև որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ:

1) տրիոլետ
2) հայրեն
3) սոնետ
4) գազել